ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ք. Երևան

<<5>> ապրիլ 2019թ.

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 5574

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎՐԱ ԱՐԳԵԼԱՆՔ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ ՊԵԿ Իրավաբանական վարչության հարկադիր գանձումների բաժնի գլխավոր մասնագետներ Թ.Ասրյանս և Ա.Գալստյանս համաձայն ՀՀ ՊԵԿ նախագահի 02.04.2019թ. թիվ N ԱՀ 5574 հանձնարարագրի և ուսումնասիրելով հարկ վճարողի հարկային գործը, և թիվ 3373-4 Ա վարչական վարույթների նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<<ԲՈՌՖԻՏ>> ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 01248542, հասցե՝ ք.Երևան, ԳԵՐՑԵՆ 9) վերաբերյալ 14.02.2019թ-ին ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի կողմից կայացվել է թիվ 3373-4 Ա որոշումը 990.478 դրամ գանձելու վերաբերյալ: Նկատի ունենալով, որ համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի նշված պարտավորությունների նկատմամբ հաշվարկվել են տույժեր, ուստի թիվ 3373-4 Ա որոշման շրջանակներում չկատարված հարկային պարտավորությունները կազմում է 1.040.016 դրամ:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ Հարկային օրենսգրքի 429-րդ 430-րդ և 431-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Արգելանք դնել <<ԲՈՌՖԻՏ>> ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 01248542) բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների վրա 1.040.016 դրամի չափով:
2. Նրան արգելել արգելադրված գումարը <u>օգտագործել և /կամ/ տնօրինել և /կամ/ տիրապետել</u>:
3. Որոշման պատճենը ոչ ուշ քան այն ընդունելու հաջորդ օրը, պատշաճ ձևով ուղարկել <<ԲՈՌՖԻՏ>> ՍՊԸ-ին, ՀՀ բոլոր առևտրային բանկեր:
4. Արգելանք դնելու մասին որոշումը պարտադիր է բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց, կազմակերպությունների ու ֆիզիկական անձանց համար և ենթակա է կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:
5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել հարկային մարմին կամ ՀՀ վարչական դատարան: Որոշման արտադատական կարգով բողոքարկումը, համաձայն ՀՀ Հարկային օրենսգրքի 432-րդ հոդվածի 5-րդ մասի, չի կասեցնում որոշման կատարումը:

Թ.Ասրյան _____ Ա.Գալստյան _____

/ստորագրությունը/ /ստորագրությունը/

ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Սույն որոշումը ստանալու պահից Դուք նախազգուշացված եք արգելադրված գումարը վատնելու, օտարելու, թաքցնելու կամ ապօրինաբար մեկ ուրիշին հանձնելու դեպքում վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկվելու մասին: